

ԱԶԱԿԱՅՐԵՆԱՒՐԱԿԱՆ

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ

Փետրվարի 15-ին լրացավ Արմավիր քաղաքում գործող Տիգրան Մեծի անվան ռազմանարդական հատուկ վարժարանի հիմնադրման 30-ամյակը։ Այդ առթիվ վարժարանում տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն։ Ներկա էին վարժարանի հիմնադիր և երկար տարիների տնօրեն, Արցախյան բոլոր պատերազմների մասնակից, գնդապետ Կորյուն Դումաշյանը, Երկայիս տնօրեն, Լեյտենանտ Լենդրուշ Դումաշյանը, ուսուցիչներ, ծնողներ, հյուրեր։ Մինչ հանդիսավոր մասի սկսելը, հյուրերը ծանոթացան վարժարանի՝ վերջերս հիմնանորոգված ու կահավորված մարզադահիճի պայմաններին, որտեղ մարզվում էին նաև «Ապագա զինվոր» դպրոցի սաները, որոնք իրենց տնօրեն Սամսոն Մոլուայանի հետ եկել էին մասնակցելու ռազմանարդական կրթօջախի տոմին։ Վարժարանի ՄԿՎԳ փոխտնօրեն, Լեյտենանտ Գարիկ Մելիքյանի հրամանով վարժարանի սաները, ըստ դասարան-վաշտերի, շարվեցին շարահրապարակում։ Շարքում էին նաև «Ապագա զինվոր» դպրոցի սաները։ Այսուհետև Գ. Մելիքյանը գեկուցեց տնօրեն Լենդրուշ Դումաշյանին, որ վարժարանի սաները շարված են հրապարակում և պատրաստ հան-



շնորհավորեց գնդապետ Կորյուն Ղումաշյանը: Ներկայացվեց վարժարանի անացած ճանապարհը: Նշվեց նաև՝ 35 տարի առաջ փետրվարի 15-ին է կազմավորվել «Մեծն Տիգրան» աշխարհազորային գունդը, որի հրամանատարներ են Եղիշ Կ. Ղումաշյանը, Արմենակ Արմենակյանը, շտաբի պետ՝ Ա. Աղաբարյանը, Տ. Սարգսյանը, Ռ. Սիմոնյանը, Ս. Այվազյանը, Տ. Ջարությունյանը: 1990-1992 թվականներին «Մեծն Տիգրան»-ի նարտական գործողությունները ղեկավարել է ռազմական խորհրդարքը: Գնդից 32 ազատամարտիկ դարձել են Յավերժի ճամփորդ: Յայաստանի Յանրապետության «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվել են Ա. Արմենակյանը, որը սպանվեց ՀՀ ԱԺ-ում 1999թ. հոկտեմբերի 27-ին և Տիգրան Սարգսյանը, որը գրիվել է 1991 թ. ղեկավարելու 9-ին Էրեցում: Փետրվարի 15-ին նաև վարժարանի հիմնադիր Կ. Ղումաշյանի ծննդյան օրն էր: Կ. Ղումաշյանը պատմեց, որ սկզբնական շրջանում Եղիշ են նժվարություններ, բայց կարողացել է հաղթահարել: Այսօր էլ կան խոչընդոտներ, բայց հաղթահարվում են: Նախնական գինվորական պատրաստություն առարկան վարժարանում դասավանդվել է հիմնադրման առաջին օրվանից, և նույն առարկան սկսել են դասավանդել ՀՀ և Արցախի համրակորտական դպրոցներում: Նա կարևորեց այն հանգամանքը, որ Տիգրան Մեծի անվան վարժարանի սաները պատվով են կատարում իրենց պարտականությունն արդեն հայոց բանակում՝ անկախ շարքային են, թե սպա: Վարժարանում շատ են նաև աղջիկներ՝ պատրաստ հետազայտում շարունակել գինվորական կյանքը:

դիսավոր արարողության: Դրոշակակիրնե-
րի ջոկը հրապարակ բերեց ՀՅ Եռազույնը և
վարժարանի դրոշը: Յնչեց ՀՅ օրիներգը,
եղավ լության րոպե: Վարժարանի պատ-
մությունը ներկայացրեց վարժարանի աշ-
խատակից Շ. Սարգսյանը:

1995 թվականին Արցախյան պատերազմի հաղթական ավարտից հետո Հոկտեմբերյան քաղաքում, Կ. Ղումաշյանի նախաձեռնությամբ ու ՀՀ կրթության նախարարության աջակցությամբ, հիմնվել է նախնական գինըպորական պատրաստության ճամբար-կենտրոն, որն էլ մեկ տարի անց վերածվում է վարժարանի: Առաջին 25 սաներից 23-ը դարձել են Քայոց քանակի սպա: Նետազյում էլ վարժարանի շատ շոջանափարտներ

Եղան Ելույթներ նաև ծնողների կողմից
Բոլորն էլ գոհ են վարժարանի գործունեու-
թյունից, անձնակազմից:

Ներկաներին ողջունեց նաև վարժարանի ներկայիս տնօրին, լեյտենանտ Լենդրուշ Ղումաշյանը: Նա ՀՀ ԿԳՍՍ նախարարության ենթակայությամբ գործող կրթօջախն տնօրինում է 2021 թվականից՝ փոխարինելով հով հորը, որ վարժարանը հիմնել է 1995 թվականին: Այժմ վարժարանի 8-12-րդ դասարաններում սովորում են 100-ից ավելի սաներ: Բոլորը, անկախ բնակության վայրից, բնակվում են վարժարանի տարածքում՝ պահովված բնակելի պայմաններով, սննդով, համազգեստով և ամենակարևոր՝ հայեցի դաստիարակությամբ և ուսումնով: Սաների նկատմամբ ցուցաբերվում է ծննդական վերաբերնունը տնօրինության ու մանկավարժների կողմից: Բացի հանրակրթական ծրագրից, վարժարանի սաները սովորում են նաև ազգային պար, ծրագրավորում, թուրքերեն, ավիոնութելների պատրաստում: Շրջանավարտների 60-80 տոկոսը շարունակում է ռազմական



Σηνιακιαν միջոցառումն ավարտվեց դարձ-
յալ շարային վարժությամբ:

A black and white photograph showing a group of approximately 15 people posing for a photo in front of a stone building. The group consists of both men and women, many of whom are wearing camouflage uniforms. In the center, a man in a uniform holds a small child. To his right, another man in a uniform holds a young girl. Several other individuals in uniforms are standing behind them. In the foreground, a woman in a dark coat and a young girl are visible, looking towards the camera. The building behind them has a large circular emblem at the top and some text on the wall that is partially obscured.

Կրթությունը: Այսօր Հայոց բանակում իրենց շրջանավարտներից շատ կան: Տնօրենը ցավով տեղեկացրեց, որ Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ 26 շրջանավարտ է ողիկել, կան վիրավորութեր:

Յշութերի հարցուն էր վարժարանի նախկին սան, այժմ Իջևանի տարածքային պաշտպանության բրիգադի ՀՀՍ ծառայությունների պետ, մայոր Արտյոմ Մարեկսյանը: Իր շնորհավորական խոսքում նա կարևորեց վարժարանի դերը Դայոց բանակի համար՝ հավելելով՝ հենց այստեղ ստացած կրթությունն է իրեն հասցել նայորի կոչման:

Ցուցադրական ելույթով հանդես եկամ վարժարանի հատուկ ցոկատի մարտիկնե-

የሆነ አገልግሎት የሚከተሉት ስምዎች በመስጠት ተከተለዋል፡፡

A black and white photograph showing a large group of soldiers in camouflage uniforms standing in formation outdoors. They are arranged in several rows, facing forward. The background shows a clear sky and some utility poles.

Զոհրաբ Շլքովյան

ՆՎԻՐՎԱԾ՝ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱԵԼԻԿԻ ԾՆՆԴՅԱՆ 160- ԱՄՅԱԿԻՆ

«Երբ ցեղան է գործում, Գարահիսարցի
մի հյուսն դառնում է Անդրամիկ և
Սեբաստացի մի շինական՝ Սուրաղ»:
Գարեհն Նժողու

Հանդիսավար Ամնա Կոստանյանը, որը
մշտապես ննան միջոցառութենք է վարում և
հաճախ «Վահագն»-ի հետ է, դիմեց ներկա-
ցնելու օրու համար ի հայտ ուղարկեց:

Ընտանիքում ծնված Անդրանիկ Օզանյանի
Անդրանիկի պատգամներով ապրող երևելի
հայորդիների շնորհիվ էլ չի մոռացվում մեր

Փետրվարի 25-ին Զորավար Անդրա-
նիկի ծննդյան 160-ամյակի առթիվ
Երևանում՝ Հայաստանի կույրերի միավոր-
ման «Սիկրատ Շահնազարյանի անվան
մշակույթի տուն» ՍՊ ընկերության դահլի-
ճում, տեղի ունեցավ հանդիսավոր երեկո:
Ոգևորող այս միջոցառումն կազմակերպվել
էր «Վահագն» ռազմահայրենասիրական
բարեգործական հասարակական կազմա-
կերպության (ՈՅԲՀԿ) հիմնադիր-նախագահ
Կարապետ Կարապետյանի (Մորուք Կարո)
նախաձեռնությամբ ու ջանքերի շնորհիվ:
Միջոցառումն սկսվեց ողջունի խոսքով:

գաղափարի հզոր մարտիկների, ազգային դեմքերի, մեր օրեր հասած արդեն հերոսի կոչումների արժանի քաջազունների հիշատակը»: Իր խոսքում Ա. Կոստանյանը տեղեկացրեց նաև՝ 12 տարի առաջ նույն օրը հիմնադրվել է «Վահագն» ՈՐԲՇԿ-ն: Կարևորեց նաև Կարո Կարապետյանի դերը, որը մշտապես ապրելով Անդրանիկի գաղափարներով, հատկապես՝ «Ամեն օր գլուխմերո բարձին դնելուց եւ քնանալուց առաջ, յիշեք, թէ այդ օրը ինչ էք արել ծեր ազգի համար» լեզնդար ասույրով, կարողացել է մի հարլի տակ թերել այն հայրենակիցներին, որոնք քաջատեղյակ են հայրենիքում կատարվող անցուղարձից և արժևորում են անդրանիկյան գաղափարները:

ԱՐՑԱԽԱՅԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

35 ՏԱՐՎԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Մարդ Երկիր մոլորակի վրա բնակ-
վում է գրեթե 200 000 տարի, և այս
ամբողջ ընթացքն ուղեկցվել է գոյության
պայքարով: Հայկական լեռնաշխարհում հայ
ժողովուրդը բնակվում է հազարավոր տարի-
ներ: Նա այս իրավունքն ունի ի ծնե և միշտ
այն պահպանելու պայքարի մեջ է: Այսպի-
սով, կարելի է ասել, որ հայ ժողովրդի գոյա-
մարտը, որը սկսվել է դեռևս Հայկ Նահապե-
տի օրոք, բնականոն կերպով հիմք է հանդի-
սացել Հայոց բանակի ստեղծմանը: Մենք
2025թ. նշում ենք Հայաստանի 3-րդ Հանրա-
պետության բանակի կազմավորման 33-ամ-
յակը: Հայկական բանակը մինչ օրս պահ-
պանում է Հայկ Նահապետի օրոք ծևավոր-
ված ավանդույթը, այն է՝ ազգովի բանակ լի-
նելը: Սա ըստ պահանջի ծևավորված ավան-
դույթն է և մեր պետականության պահպան-
ման միակ գրավականն է:

Դայոց բանակին է նվիրված «Թեքեյան կենտրոն»-ում փետրվարի 7-ին բացված «Ազգը՝ բանակ» խորագրով լուսանկարների ցուցահամելեսը: Լուսանկարների հեղինակը հայրս է՝ Զոհրաբ Շրոյշյան՝ լուսանկարիչ, լրագրող, ազատամարտիկ: Դայուս տարիներ շարունակ անշահախնդրորեն նվիրվել է Արցախում, հատկապես Քաշարաղի շրջանում հայոց հազարամյա ժառանգության բացահայտման ու լուսաբանմանը: Զինելով մասնագիտությամբ պատմաբան կամ հնագետ՝ տիրապետում է հսկայական գիտելիքների մեր պատմության և ճարտարապետական հուշարձանների մասին: Ինձ հաճախ եմ հարցում՝ որտեղի՞ց է զալիս սերը դեպի հայկական ամեն ինչ: Շինական պապս մեծ սեր ուներ հայ գրականության նկատմամբ, հատկապես շատ էր սիրում պատմավեպեր, և կարդալով Դ. Ղենիքյանի «Վարդանանք»-ը, որոշում է իր երկրորդ որդուն կոչել Վարդան Մամիկոնյանի օավակի պատվին՝ Զոհրակ: Դուքս պապը հեքիաթասաց է եղել, հայրիկը հաճախ է հիշում Գեղրդի պապի պատմությունները ցուրտ ծնռանը, երբ ամբողջ գյուղը հավաքվում էր և լսում նրա հեքիաթները քաջերի և նրանց քաջագործությունների մասին: Գուցե հենց սա է եղել հայրիկիս անսահման սիրո պատճառը դեպի իր հայրենիքը, իր մշակույթը, չնայած որ ստացել է բացառապես խորհրդային գաղափարախոսությամբ կրթություն: Պետք է նշեմ նաև՝ դեռ վաղ տարիքից հետաքրքրված է եղել լուսանկարչությամբ և երբ մեծ եղրորդ նվեր է ստացել իր առաջին լուսանկառավական

սակացը՝ որ աշխատ է լուսավագայզան ապարատը, սկսել է վավերագրել այն ամենը, ինչ իրեն հետաքրքրել է և հաճարել է կարևոր:

Մասնակիցը լինելով 1988 թվականին սկսված Արցախյան շարժմանը, այնուհետև Արցախյան ազատագրական պատերազմին, հետագայում բնակություն հաստատելով Արցախի նորաստեղծ հանրապետության Քաշարադի շրջանի Բերձոր քաղաքում և մշտապես պահպանելով կապը Արցախի Պաշտպանության բանակի հետ՝ կուտակել է

Այս արխիվի մի փոքր մասն է ներկայացված ցուցահանդեսում, որի բացումն սկսվեց Արարատյան Հայրապետական թեմի ներկայացուցիչ Տեր Զենոն քահանա Բարսեղյանի խոսքով: Նա հյուրերին փոխանցեց Արարատյան թեմի առաջնորդ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հայրական օրինաբարձր և աղոթքը հայոց աշխարհին ու հայ գինը Որին: Այսուհետև ասաց, որ նկարները դիտելիս հիշեց Զերմուկյան դեպքերի

ენტავდებოւმ უთერ ასინა ეცელებეით თხენი ის-
ნევად მა აუთმიტეით: უჩ კინ, თაორუალე
ართასქელიყ, გახანაუქა ასტე է, որ იչ թե
լաց է լիნით իր զაվაկի აպაհովერება
հაմაր, այլ Աստծուց იգի է խնդրում, որ իր
զაվაկը կարողանա քաջություն գտնել
պայքարելու և მაքառելու հայրենիքի հա-
մար, չნახაնდეլու: Օրեր անց, երբ նորից
հանդիպում է კնոջը, իմանում է, որ զაվაկը

կանց մասին է, որոնք, լինելով թե՝ զինվորական, թե՝ շինական, մեծ թե՝ փոքր, մասնակցել են իրենց հայրենիքի պաշտպանությանը: Նշեց, որ ներկաներից շատերը կարող են լրացնակարներում տեսնել իրենց ընկերներին, ընտանիքի անդամներին, ծանոթներին, ինչն իրենց:

Ցուցահանդեսի նախապատրաստակամաց աշխատանքների ընթացքում ունեցած

զրոյցների ժամանակ Ա. Ծուլիկյանը ու Զ. Ըօքոյանը բազմաթիվ ընդհանուր ընկերների և ծանոթ մարդկանց են հիշել, և ցավով նկատել, որ Գրանցից շատերն այժմ չկան. ոմանք զոհվել են Արցախյան ազատագրական պատերազմում, ոմանք՝ համեմատաբար «խաղաղ» ժամանակներում: Ա. Ծուլիկյանը հիշատակեց մեկ տարի առաջ անմահության ճամփան բրնած ազատամարտիկ, մտավորական Գագիկ Գինոսյանին, որի ջանքերի շնորհիվ հայկագրական ռազմապարն այսօր Հայոց բանակի զաղափարականը, հայ պայտ տարածվել է Հայաստանու սահմաններից դուրս ապրող ք, և այս երևոյթն իր տեսակով ևս ազափարի մաս է: Ցուցահանապանկարների շարք է նվիրել Զ. Ըօքոյելի հայորդությունը: Ա. Ծուլիկյանի համար ներկանելով մեկ րոպե լրություն հարցեցին մեր ընդունակ Անդր

Դոլի շաբաթով շատուրով հայսական ազգագրական ռազմապարն այսօր դարձել է Հայոց բանակի գաղափարական բաղադրիչը, հայ պարզ տարածվել է Հայաստանում և դրա սահմաններից դուրս ապրող հայերի մեջ, և այս երևույթն իր տեսակով ևս ազգ-բանակ գաղափարի մաս է: Ցուցահանդեսում լրասանկարների շարք է նվիրել Զ. Շրջանը երևելի հայորդուն: Ա. Ծովիկյանի խնդրանքով ներկաները մեկ րոպե լրությամբ հարգեցին մեր բոլոր Անձանական քաջերի հիշատակը: Շարունակելով խոսքը՝ Ա. Ծովիկյանը կարևորեց Հայոց բանակի գոյությունը: Նշեց, որ աշխարհում շատ ազգեր կան, որոնք դարեր շարունակ պատերազմական դրույթան մեջ են, սակայն նրանց բոլորին միավորում է ազատ լինելու համար ազգովի պայքարի դուրս գալուով վճռականությունը, ուստի շատ կարևոր է, որ նման տեսակ ուժը կառավարվի հմտության ռազմական գործիքների կողմից: Բանակը չպետք է վստահել անփոյթ, եսասեր և շահամոլ մարդկանց, առավել ևս՝ ապազգային: Բա-

ավարտեց Տերունական աղոթքով:

Բացման խոսքով համեստ եկավ «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի տնօրեն Արմեն Շուլիկյանը: Նշեց, որ Զոհրաբ Շռքոյանի հետ բարեկամներ են այն ժամանակներից ի վեր, երբ Քերձորի թիվ 1 միջազգարգ դպրոցը վերանվանվեց Վահան Թեքեյանի անունով, և սկսվեց սերտ համագործակցություն տանիքի հավատամբը, քանի որ այն մեր խաղաղության միակ գրավականն է, մենք պարտադրված ենք ազգ-բանակ դառնալու որպեսզի իրականացնենք մեր ազգային երազանքները: Ա. Շուլիկյանը ապա խոսք փոխանցեց ցուցահանդեսի հեղինակին:

սկզբունքային և թախմնդիր մարդ, ով միևնույն ժամանակ շատ համեստ է: Նախկին ցուցահանդեսներում ներկայանալով որպես մեր պատմանշակութային հուշարձանների գիտակ և բացահայտող, որը երևելի մասնագետների հետ մասնակցել է մի շարք գիտարշավների և դրանց ընթացքում ստեղծել է ոչ միայն մասնագիտական, այլ նաև գեղագիտական բարձրաճաշակ լուսամկարներ, այս անգամ ներկայանում է այլ կերպարով: Այս ցուցահանդեսը մարդ-յանական օլիմպիադաներին:

Անդրադասնալով ցուցահանդեսին՝ նշեց, որ չնայած այս տարի տոնում ենք մեր բանակի 33-ամյակը, սակայն Յայոց բանակը 33 և կրկնակի դարի պատմություն ունի: Յայոց բանակի մասին հիշատակվում է նոյնիսկ Աստվածաշնչում, երբ Աստված ասում է՝ գնացե՛ք և կանչեք Թորգոնաց տան գինվոր ներին, թող գան ճնշեն այդ անօրեններին: Այնպես որ, հայկական բանակը եղել է, կա ու կլինի: Իսկ ցուցահանդեսին անդրադասն-



րը: Լուսանկարների դեմքերից շատերն այժմ մեզ հետ չեն, սակայն նրանց արած գործերի մասին մինչ օրս խսպվում է հիացմունքով:

Ցուցադրությունում մի հատված է նվիրված է 2020թ. պատերազմից հետո ստեղծված ռազմանարզական կառույցների գործունեությանը, որոնց հետ համագործակցում է հայրս և առավել է կարևորում նոր սերնդի դերը մեր բանակի կյանքում:

ՀՀ ԳԱԱ ՌԱՎԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՖԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ամփոփում է ՀԱԻ տնօրեն Արսեն ԲՈԲՈԽՅԱՆԸ

Հայաստանի Համբապետության գիտությունների ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) համակարգում գործող Հնագիտության և ազգագրության ինստիտուտը (ՀԱԻ) հիմնադրվել է 1959 թվականին։ Հիմնադրի տնօրինը եղել և մինչև 1990թ. ինստիտուտը ղեկավարել է հնագետ, պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Բարեկեն Առաքելյանը (1912-2004 թթ.): Հետագայում ինստիտուտը ղեկավարել են հնագետ, պ.գ.դ. Գևորգ Տիրացյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ. գ. դ. Արամ Քալանթարյանը (1993-2006 թթ.), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ. Պավել Ավետիսյանը (2006-2022 թթ.): Գիտական այս կառույցի գործունեության առարկան և նպատակներն են՝ հնագիտության, ազգագրության, մշակութային մարդաբանության, բանագիտության, վիմագրագիտության, էրնուոցհոլոգիայի, հնակենսաբանության բնագավառներում գիտական հետազոտությունների իրականացումը դաշտային և փորձարական աշխատանքների միջոցով։ 2024 թվականից սկսած ինստիտուտում գործում է նաև Գիտակազմակերպչական խումբը։

2022 թվականից հնասիրուտի տնօրենն է պ. գ. դ. Արմեն ԲՈՐՈԽՆՅԱՆԸ, որի հետ և վարեցինք հաջողագրույցը:

- 2024 թվականը ի՞նչ հաջողություններով եղարափիկեց Նմագիտության և ազգայինության հմտականությունը:

- 2024ρ. Ὡηρωαցրում ինստիտուտի կողմանց շարունակվել են «Հայ հնագիտության, ազգագրության և բանագիտության արդի և հեռանկարյաին պարզացման խնդիրները» ծրագրով ուսումնասիրությունները: Գիտահետազոտական և գիտակազմակերպչական աշխատանքները տարվել են 11 ուղղություններով՝ Ա. հիմնարար և կիրառական հետազոտություններ, Բ. դաշտային հնագիտական հետազոտություններ (պեղումներ), ազգագրական և բանահյուսական հավաքական գիտարշավներ, Գ. մշակութային արժեքների վերականցնում, Վավերագրում և թանգարանացում, Դ. անալիտիկ լարորատոր հետազոտություններ, Ե. գեղողեզիական-քարտեզագրական և ճարտարապետական-չափագրական աշխատանքներ, Զ. արխիվային նյութերի մշակում և ուսումնասիրություն, Է. միջազգային համագործակցություն, Ը. գիտական ուսումնասիրությունների հրատարակում, Թ. կադրերի պատրաստում և վերապարագագում, Ժ. գիտաժողովների, սեմինարների և կլոր սեղանների կազմակերպում և ԺԱ. պեղվող հուշարձանների պահպանության կազմակերպում, կոնսերվացման և թանգարանացման աշխատանքներ:

Նշված ծրագրերն իրականացվում են 1. «Հնագոյն և Քին Հայաստան ։ Հնագիտական սկզբնաղբյուրների պեղումներ և ուսումնասիրություն», 2. «Քարաշամբի դամբարանադաշտի պեղումներ և ուսումնասիրություն», 3. «Արցախի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» 4. ««Դիվան հայ վիճագորության» պրակտիկազմում և հրատարակություն», 5. «Ավանդականը և նորը հայոց մշակույթում. պահպանան և զարգացման խնդիրներ», 6. «Առօրեականությունն անցյալում և ներկայում. մարդաբանական ուսումնասիրություն», 7. «Կիրառական ազգագորություն», 8. «Սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում (ավանդույթ և արդիականություն)», 9. «Հայ բանահյուսական մշակույթ. համեմատական և տիպաբանական ուսումնասիրություններ», 10. «Հայկական հրաշապատում հեթիքաթների հիմնական մոտիվների ու դիպաշարերի գուգադրական ուսումնասիրություն», 11. «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները՝ դարձյալ 11 ենթածրագրերով, որոնք արտացոլում են մեր ինստիտուտի հիմնական գիտական ուղղությունները՝ հնագիտություն, վիճագորություն, ազգագ-



Վետու տարվա կարևորագույն արդյունքը Երվանդ Լալյայանի «Երկեր»-ի 5-րդ հատորի իրատարակությունն է: Պ.գ.թ. Լևոն Աբրահամյանի ղեկավարությամբ՝ «Ազօրեականությունն անցյալում և ներկայում մարդաբանական ուսումնասիրություն» ենթագրով շարունակվում են հետազոտությունները «Վիզուալ մարդաբանության», «Հիշողության մարդաբանության» և «Խորհրդային և հետխորհրդային առօրեականության» թեմաներով: Սրանց մեջ հատուկ ուշադրություն է դարձվում փոփոխվող իրողություններին (արցախսիների շրջափակում, բռնագաղթ), որոնք, որպես, որակավորվելով որպես տրավմատիկ հիշողություն, դարձում են առանձին հետազոտության նյութ:

«Հայ բանահյուսական մշակույթի համեմատական և տիպաբանական ուսումնասիրություն» Ենթածրագրով, որը ղեկավարում է ք.գ.թ. Տորբ Դալայանը, շարունակվել Են իրականացվել բանահյուսական նյութի գրառումներ և դասակարգում, բանաձևային ժանրերի գիտական համահավաքների կազ-

ମାତ୍ରିକ, ମହିଳାଙ୍କ ଓ ମନ୍ଦିରଙ୍କ (ପ୍ରକାଶକାଙ୍କାଙ୍କ) ଦ୍ୱାରା ରେଖାଚିତ୍ରରେ ଅନୁଷ୍ଠାନିକ ରୂପରେ ପରିଚୟ କରାଯାଇଛି।

«Յայկական հրաշապատում հեքիաթների հիմնական մոտիվների ու դիպաշարերի գուգադրական ուսումնասիրություն» Ենթածրագրով (Դեկ.՝ բ.գ.դ. Թամար Յայրապետյան) հրատարակության են պատրաստվում «Յայկական ժողովրդական հեքիաթներ» (ՅԺ) շարքի «Ռշտունիք» և «Բուլվարըն» հատորները: Ավարտին է հասցեվերը՝ «Հատախ» հատորի հեքիաթների մշակման, համապատասխանեցման և անգլիերեն թարգմանության աշխատանքները:

թյուն, սոցիոլոգիա, հոգեբանություն, ազգաբանություն, մաթեմատիկական մոդելավորում, ինչպես նաև ֆիզիկական մեթոդաբանական սկզբունքների կիրառմանը: Անդամանությունը և նոր գիտական կապեր են ստեղծվել Չեխիայի, ՌԴ, ՀՀ, Ուկրաինայի, Լիբանանի, Լեհաստանի և Վրաստանի առաջատար գիտական հաստատությունների և անհատ գիտնականների հետ:

Ուգ.դ. Կավլետ Պետրոսյանի
ղեկավարությամբ գործում է «Արցախի
պատմամշակութային ժառանգության ու-
սումնասիրություն» Ենթածրագիրը, որու-
շարունակվել են հետազոտվել Արցախի
տարածքի հնագիտական հուշարձաններին
Եկեղեցիներին և վանքերին վերաբերող խն-
դիրները: Շարունակվում է Տիգանակերտի
երկարամյա պեղումների արդյունքներն ամս-
փոփող մենագրության շարադրանքը: Դաշ-
վետու տարում կատարված աշխատանքնե-
րի մեջ հատուկ նշելի է Նշդիկ Երանյանի
կողմից եվրոպական թանգարաններուն
պահպող Արցախից տեղափոխված հնագի-
տական նյութերի վավերացումը և թվայնա-
ցումը: «Դամայնքների հոգևոր (կրոնական)՝
կյանքի ազգագրական և մշակութարանա-
կան ուսումնասիրություն» Ենթածրագրու-
(դիւկ:՝ պ. գ. թ. L. Միմոնյան) իրականացվում
են հայոց և ՀՀ տարածքում բնակվող ազգա-
յին փոքրամասնությունների հոգևոր կյանքի
ուսումնասիրությունները:

- Համրապետության տարբեր վայրերում
ինստիտուտի արշավախմբերի կողմից իրա-

Կանացան հենավայրերի ուսումնասիրությունները ու պեղումները. Եղան՝ բացարձիկ հաջողություններ և որո՞նք են դրանք: 2025-ին կշարունակվե՞ն նշագծ աշխատանքները:

- 2024թ. ընթացքում ՀՀ տարածքում պեղված 27 հուշարձանների բվում կարևորվում է «Դեեղավան» նորահայտ բնակատեղին, որը գտնվում է Տափլշի մարզում՝ Փամբակի լեռնաշղթայից հյուսիս՝ Կուր գետի ավազանում: Դագետ Ալոն Աղիկյանի դեկավարությամբ պեղվող հնավայրը 14C տվյալներով թվագրվում է մ. թ. ա. 6-րդ հազարամյակով և համարվում է Դայաստանի առաջին նեղլիթյան հուշարձանը: Դավայր-հուշարձանի պահպանվածության բարձր աստիճանը բոլով է տալիս այն համարել հեռանկարային միավոր ուսումնասիրությունների համար: Կարևոր արդյունքներ են գրանցվել Վ. Մելիքյանի դեկավարությամբ՝ Արարատի մարզի Տիգրանաշեն-1 հնավայրի պեղումներով: Արձանագրվել է միջին բրոնզի դարի «Թռեղբ-վանաձորյան» մշակույթի բնակատեղի՝ կարուցապատճան մանրամասներով: Սա լրացնում է մեր պատկերացումներն այդ դարաշրջանի մասին, որ ծևավորվել է առավելապես դամբարանների պեղումների արդյունքների հիման վրա:

Ննազետ Գագիկ Մինասի Սարգսյանի ղեկավարությամբ՝ մեկնարկել են Սյունյաց արքաների դյուակի պեղումները Կապանում, որը մինչ օրս անհայտ մնացած աշխարհիկ մոնումենտալ համալիրի փաստագրման և արժենորման ճշանակալի օրինակ է:

Հատկապես ուշագրավ են Արտաշատ
մայրաքաղաքն ուսումնասիրող հայ-գերմա-
նական արշավախմբի պեղումներով ստաց-
ված նոր տվյալները, որոնք լրց են սփուռմ
Դայաստանի անտիկ շրջանի մայրաքաղա-
քում ընթացած տարարնույթ սոցիալ-մշա-
կուրային գործընթացների վրա՝ քացահայ-
տելով այդ հռչակավոր կենտրոնի՝ Սետաք-
սի ճանապարհով հրականացվող ընդար-
ձակ առևտորային կապերն ու Մերձավոր
Արևելքում նրա քաղաքական և մշակութա-
յին դերակատարության մանրամասները։
Արտաշատի 17-րդ բլրի արևելյան լանջին
2024թ. քացվել են մոտ 1000 ք/մ մակերեսով
ուրանիլյուն եկեղեցու հիմնապատերը։ Ըստ
ստացված ռադիոածխածնային տվյալների՝
այս կառույցը վերաբերում է 4-րդ դարի
առաջին կեսին և, փաստորեն, Դայաստանի
հնագիտորեն փաստագրված վաղագույն
եկեղեցին է։ Այդ հայտնագործությունը գա-
լիս է հայես լրացնելու Դայաստանում քրիս-
տոնեության տարածման մեխանիզմների
մասին մեր պատկերացումները (ինկ.՝ պ. գ.
Ա. Չ. Շ. Բ. Շ. Բ.)

- 2024թ. ընթացքում ինստիտուտում տեղի ունեցան տարրեր սեմինարներ, դասախոսություններ, գիտաժողովներ ինչպես ինստիտուտի, այնպես էլ այլ կառույցների աշխատակիցների կողմից: 2025-ին կլինիկայում նաև բարեկարգություն կազմակերպվի:

- Սեմինարները, դասախոսությունները և գիտաժողովները մեր ինստիտուտի գործունեության կարևոր մասն են ներկայացնում և բնականաբար կշարունակվեն ընթացիկ տարում։ Մասնավորապես, Կաղ հնագիտության բաժինն ու Քարաշամբի դանքարանադաշտի և նորակառուցների ուսումնասիրության գիտահետազոտական խումբը մարտին նախատեսում է «Ապարնակեցումը և մշակութային լանդշաֆտի կերպափոխումները «Կուրարաքայան մշակույթ»-ի կազմալուծնան փուլում» աշխատաժողովը։ Մշակութային մարդաբանության բաժինը և Կիրառական մարդաբանության գիտահետազոտական խումբը հունիսին նախատեսում է «Տեղահանություն և հիշողություն. Արցախի հրնաբաց ճգնաժամը բանավոր պատմություններում»

ԱՐՑԱԽՆԱ

«ՏԱՐԱ-ՏԱՐԱ»



Բոլոր ժամանակներում արցախսի կանայք առանձնացել են իրենց շնորհընով, կանացի ուժով, ոգեւորելու ու առաջ մղելու եզակի հատկությամբ: Արցախին պատուհասած աղեսից ու բռնատեղահանմելուց հետո արցախսի շատ կանայք կարողացել են իրենց մեջ ուժ գտնել ու շրունակել իրենց գործունեությունը՝ չնայած դժվարություններին եւ աշխատանքային ոչ այնքան բարենպաստ պայմաններին:

Ովքեր թեկուր մեկ անգամ անցել են Ստեփանակերտի Կարո Ալվարյանի փողոցով, անշուշտ կիշտեն, որ անտարբեր չէին մնացել ուշագրավ անվանմամբ՝ «Տեսան-տեսան» փոքր, գեղեցիկ, հարմարավետ խանութի նկատմամբ, որից արձակվող անուշ բռւյրն էլ իր հերթին անտարբեր չէր թողնում սուրճի կամ թեյի սիրահար անցորդին: Խանութը մնարարուն ու հիմնահասարակությունը պերե

Դրա պաշտոնական առաջնորդությամբ կազմված պատվիրակությունը գործում է ՀՀ կազմությամբ սահմանված ժամանակաշրջանում՝ պահպանելու և ապահովելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահպանական առաջնորդության առաջնորդությամբ:

Աղա Սարգսյանը ծնվել է 1984թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտ քաղաքում: Ստացել է տնտեսագետի մասնագիտություն: Աշխատել է մասնավոր հատվածում՝ «Սյունիք» ՍՊԸ-ում, այնուհետև 2011 թվականից աշխատել է ԱՇ ֆինանսների նախարարության գանձապետարանում: 2020թ. 44-օրյա պատերազմից հետո որոշեց աշխատանքի հետ համատեղ թերթի ու սուրբերի հետ կապված թիգնես ունենալ, մինչդեռ նա իր աշխատանքը չի դիտարկում որպես թիգնես, այլ սիրելի գրաղմունը:

- Ինչպես առաջացավ «Տեսան-տենան» խանութ ունենալու գաղափարը, մասնավորապես ի՞նչ ապրանքատեսակների իրացման վրա եք դրել շեշտո՞:

- Երբ 44-օրյա պատերազմից հետո վերադարձանք Արցախ, մեր սանիկի առաջարկով որոշեցի նմանատիպը չունեցող գործ սկսել, որը կտարբերվեր իր յուրատիպությամբ: Նշեմ, որ երբեւ իմ գործունեությունը չեմ դիտարկել որպես առեւտոր: Այսինքն՝ իմ նպատակը մի տեղից գնելու ու մյուս տեղում վաճառելու չեր, այլ նոր կյանք, նոր շունչ հաղորդելու, ինչը կարելի է անել ապրանքատեսակները, տվյալ դեպքում՝ թեյը, սուրճը, համեմունքը կամ որակյալ սպասքը վերափոխված ներկայացնելով՝ շուկայում նորություն տալով: Սկզբնական շրջանում մի քանի ամիս աշխատեցի տանը: Զգալով, որ շուկայում պահանջարկ կա, որոշեցի աշխատանքս տեղափոխել խանութի հարթակ: Իսկ խանութը պետք է լիներ ոչ թե սովորական, այլ յուրահատուկ ու տարբերվող, իր ծենով ու չափով ստանդարտներին անհամապատասխան: Կարենոր չափորոշիչ էր նաև շուկայականից տարբերվող՝ ավելի մատչելի գնացուցակով ապրանքատեսակներն առաջարկելու: Քանի որ սպասարկում էինք արցախցիներին, ուրեմն ամեն մի մանրութ պետք է լիներ մտածված: Ձև որ արցախցին այն մարդն է, որն ունի բարձրակարգ ծաշակ, ունի շնորհք՝ շրջապատին ուրախացնելու, նվեր մատուցելու, բայց չունի անսահմանափակ հնարավորություն: Ըստ այդմ էլ որոշեցի, որ ամեն ինչը խանութում պետք է լինի բարձրակարգ, բայց՝ մատչելի, որպեսզի բոլորը կարողանային օգտվել:

- Յուրատիկ անվանումը հավանաբար իր մեկնաբանությունն ունի. ինչպես ծնվեց խանութքն այդպես կոչելու միտքը:

- Երբ խանութը բացելու համար արդեն անհրաժեշտ էր անուն, սկսեցի փնտրել համապատասխան տարրերակները։ Անվանումը

www.silvano.it | 010 6500000 | 010 6500001 | 010 6500002 | 010 6500003 | 010 6500004

- Խանութը աշխատեց բլոկադայի ժամանակ գրեթե մինչեւ վերջ: «Տեսան-տենան»-ը այն խանութը էր Ստեփանակերտում, որը փակվեց թերեւս մյուս փակված խանութներից շատ հետո: Ապրանքը ձգտում էինք չսպառել, ոմանց նման չթաքցնել, այլ տաժողովրդին՝ համապատասխան չափարարիներով: Մարդիկ գալիս էին եւ կիլոգրամ ներով էին թեյ կամ սուրճ ուզում, բայց հասկացնում էինք՝ եթե այդ քանակով տաներ ապա ծեր հարեւաններին կամ հարազատներին 100 գրամ էլ չի հասնի: Եվ մարդիկ հասկանում էին ու վերցնում էին սահմանափակ քանակությամբ: Փառք Տիրոջը, որ այս ժամը շշջանում կարողացանք փոխմբուն մաս հասնել, աշխատել առանց որեւէ պայմանի ու նշջաղեափի: Իմ գործունեության մեջ ամեն ինչի հեղինակը Աստվածն է: Եթե չի եր նրա օգնոյ ծերըն ինձ վրա, չի ունենայն, ինչ ունեմ ու իմշին հասել եմ:

- Բռնատեղահամկելուց հետո կարողացել եք գործունեությունը շարունակելու անուն: Ի՞նչ տարբերություն եք նկատում հաճախորդների շրջանում: Արդյո՞ւնավետում կերպ է ընթանում աշխատանքը:

- «Բօնատեղահանվել» բառը տիհած է արցախոց տառապանքն ու կտտանքների ենթարկվելը հիշեցնող... Այնուամենայնիւ բռնատեղահանվելուց ու Երեւանում բնակություն հաստատելուց մի քանի ամիս հետո հասկացա, որ այստեղ պետք է վերարացնել խանութը: Սեր հայրենակիցներն ունեին ցանկալի բաներ, սանդի խնդիր այլևս չկարանեն ինչը առատ է, խանութները լիքն են բայց ներ հաճախորդները Չարենցավանից Արովյանից, անգամ մյուս քայլաբներից գալիս ու հասնում էին խանութ, ծեռք էին բերում մեր ապրանքներից իրենց կամ նվերի համար, ասուն էին, որ մերն ուրիշ է ու յուրահա-

տուկ: Ուր ամիս շարունակ խանութք կար բայց ստիպված էի փակել բարձր վարձավաճարի պատճառով: Սակայն պարտավորություն զգալով իմ հաճախորդների առջև խանութքն աշխատեցնում են օնլայն տարբերակով: Թեյից, սուրճից ու համենունքներից պատրաստում են փնջեր, բրդեր և վերի համար, ըստ ցանկության տեղադրում են նաեւ սպասք: Ընդունվում են պատվերներ ինչպես առանձին համենունքների, թեյերի ու սուրճերի, այսպես էլ դրանց համադրությանը: Փորձում են իմ սիրելի հաճախորդներին ոմքի բանից զերծ չպահել ու առաքունով հասանելի դրանքներ նրանց պատվերները: Դարձյալ յուրաքանչյուր հաճախորդի համար յուրովի մոտեցում են ցուցաբերում պատվերը փաթեթավորում են յուրատիպ ու յուրաքանչյուրի ճաշակին համապատասխան: Զես իրար նման կամ կրկնվող բան Անգամ եթե պատվիրում են երկու միատեսակ փունջ, մեկը նյուսին նման չի լինում:

որովիշետել նրանցից յուրաքանչյուրը յուրա
տիպ է: Թեյերի, սուրճերի կամ այլ իրերու
պատրաստված յուրաքանչյուր կոմպոզիցի
ցիա իր յուրատիպությունն ունի, հենց դրա
նով էլ իմ աշխատանքը տարբերվում է մյուս
խանութերներից: Դժմա էլ շարունակում եմ աշ
խատե՛՝ ցանկանալով բոլորին գոհացնելու
Այսքան տարվա մեր գործունեության արդի
յունքում չունենք որեւէ հաճախորդ, որը դժ
գոհ մնար մեզանից: Չատ ուրախ եմ, որ ու

Անը հավատարիմ հաճախորդներ, որոնք ծգուում են անեն դեպքում մեզ դիմել, ինչ-որ բան գնել մեզանից: Սիրելի հաճախորդներն ինձ ավելի են ոգեւորում, պարտավորեցնում եւ իհարկե խրախուսում դեպի նոր գաղափարներ:

- Զեր խանութքում արցախյան ավանդությանը ու զերմությունը խառնվել էին համաշխարհային թեյի մշակությին: Ներկայում է Զեր ապրանքատեսակներից օգտվելիս նկատում ենք ոչ միայն անուշարույր սուրճ, բուրումնավետ թեյեր, այլև Արցախի համը հիշեցնող ուրց ու մասուր՝ նրբանաշակ դասավորությամբ ու հոգատարությամբ շաղախված, որը հիշեցնում է հարազատ տան եւ բնության զերմությունը: Իսկ օգտագործել եք արցախյան խոտարույսերը՝ որպես թեյերի ու բուրմերի հոնմք, դրանցից որեւէ բան տեղափոխե՞լ եք Զեր հետ:

-Արցախյան խոտարույսեր ժամանակին օգտագործել ենք Արցախում: Ինքս, ամուսնուս ու ընկերուհիներիս հետ գնում է Ասկերանի շրջանի Քյաթովի դաշտավայրերից ուրց, տարբեր տեսակի խոտարույսեր հավաքելու: Բերում էինք ու ինքս այդ բոլյսերով թեյեր էի պատրաստում: Ցավոք Արցախի բնության բարիներն ու Արցախը հասանելի չեն արդեն: Արցախյան խոտարույսերի ուղղվածությունը փոքր-ինչ փոխվեց: Ներկայում ունեմ տարբեր տեսակի շատ թեյեր, ընդորում՝ նաև հեղինակային թեյեր, որը ես ինքս եմ պատրաստում՝ ազնվամորուց, հապալասից: Ունեմ ցիտրուսային թեյեր: Դաճախորդներից հաճախ եմ լսում, որ իմ գործերը հիշեցնում են Արցախը: Դա այդպես էլ կա, քանի որ ինչքան էլ անհասանելի լինի Արցախի բնությունը, այնուամենայնիվ առկա տեսակամին պատրաստվում է արցախցու ձեռքով: Ընդհանուր առմանը, ին թեյերը



Առնաշաբան

ՀՈՒՍԱՐԱՐ

Հիմնադիր՝
«Լուսարար»
կրթամշա-
լութային ՀԿ

✉ p.Երևան,
Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

**ՍԵՐԵԲՐՈՎԱՆՑԻ ԵՎ ՎԻԱՏԻՎԱԿԱՆ ՄՈՎՅԱԼՄԵՐԻ
ԱՍՏՈՎԱԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՀՈՎՈՒՄ ԵՆ ԻԵՂԻՆԱԿԱՑԵՐԸ:
ԹԵՇՔ ԸՆԹԵՐՈՂՆՅԵՐԻ ԻԵՏ ԳՐԱԳՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԵԼՈՒ
ԱՊԱՐՏԱՎՈՐՈՎԵՐՅՈՒՄ ՀԻ ԱՍԽԱՆՃՈՒՄ:**

Տպագրում է «Լիճուշ» ՍՊԸ տպարանում:
Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Տպաքանակ՝ 500
Առըստանական էլեկտրոնային՝ 28.02.2025թ.: